



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հոկտեմբերի 2016թ. թիվ 323-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ 2017-2025
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» N 29 արձանագրային որոշման 24-րդ կետի՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տարածքային զարգացման ռազմավարության մշակման մարզային հանձնաժողովի կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի;

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության մշակման ժամանակացույցը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառնությունների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 11
ք.Վանաձոր